ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. սեպտեմբերի 13-16-ը Ղրղզստանի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝ Կարեն Ալավերդյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մեթոդաբանության և հաշվետվությունների մշտադիտարկման վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ղրղզստանի Հանրապետություն (Զոլպոն-Աթա), 2017թ. սեպտեմբերի 13-16

4. Հրավիրող կողմը՝ Ղրղզստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ֆինանսական շուկաների կարգավորման և վերահսկողության պետական ծառայություն, Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Մասնակցություն ԱՊՀ գործադիր կոմիտեին առընթեր հաշվապահական հաշվառման համակարգող խորհրդի 14-րդ համաժողովին և «Եվրասիական տնտեսական միության տարածքում աուդիտորական գործունեության մասին» համաձայնագրի (այսուհետ՝ համաձայնագիր) նախագծի մշակման աշխատանքներ իրականացնող աշխատանքային խմբի հերթական նիստին:

6. Քննարկված թեմաները՝

ԱՊՀ գործադիր կոմիտեին առընթեր հաշվապահական հաշվառման համակարգող խորհրդի կողմից 2017թ. կատարված աշխատանքներ, «Եվրասիական տնտեսական միության տարածքում աուդիտորական գործունեության մասին» համաձայնագրի նախագիծ

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

- Հանդիպումներ ԱՊՀ գործադիր կոմիտեին առընթեր հաշվապահական հաշվառման համակարգող խորհրդի անդամների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ
- ԱՊՀ գործադիր կոմիտեին առընթեր հաշվապահական հաշվառման համակարգող խորհրդի հերթական նիստում ՀՀ հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտի առկա իրավիճակի և բարեփոխումների հիմնական ուղղությունների ներկայացում
- Համաձայնագրի նախագծի վերաբերյալ ԵՏՄ անդամ երկրների աուդիտորական գործունեությունը կարգավորող մարմինների կողմից ներկայացված առաջարկությունների քննարկում

- Համաձայնագրի նախագծի վերաբերյալ ԵՏՄ անդամ երկրների առևտրի և տնտեսական զարգացման (էկոնոմիկայի) նախարարությունների կողմից ներկայացված առաջարկությունների քննարկում
- Համաձայնագրի նախագծի որոշ հոդվածների վերաբերյալ ԵՏՄ անդամ երկրների միջև առկա տարբեր դիրքորոշումների քննարկում ու համաձայնեցում:

8. Հանդիպման արդյունքները և առաջարկությունները

ԱՊՀ գործադիր կոմիտեին առընթեր հաշվապահական հաշվառման համակարգող խորհրդի 14-րդ նիստի ընթացքում, որպես համակարգող խորհրդի անդամ ներկայացրել եմ նախորդ նիստից հետո ֆինանսական հաշվետվողականության և աուդիտորական գործունեության կարգավորման ոլորտում ՀՀ-ում իրականացված բարեփոխումների հիմնական ուղղությունները և առաջիկայում նախանշված քայլերը: Միջազգային մասնագիտացված կառույցների կողմից (UNCTAD, ACCA) ներկայացվել է հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտներում այդ կառույցների կողմից իրականացվող աշխատանքների հիմնական ուղղություններն ու համակարգող խորհրդի հետ համագործակցության հնարավոր ուղիները:

«Եվրասիական տնտեսական միության տարածքում աուդիտորական գործունեության մասին» համաձայնագրի նախագծի քննարկման ժամանակ ներկայացրել եմ Համաձայնագրի նախագծի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումը, այդ թվում նաև՝ որոշ հոդվածների վերաբերյալ անհամաձայնությունների կամ տարակարծությունների հիմնավորումները: Հաշվի առնելով ԵՏՀ ձեռնարկատիրության աջակցման և իրավաբանական դեպարտամենտների դիտողությունները, որոշում է կայացվել աշխատանքային խմբում հնարավորինս հստակեցնել Համաձայնագրում նախատեսվող սահմանափակումների բնույթը, դրանք հասցնելով նվազագույնի: Որոշվել է առաջարկել անդամ-պետություններին ևս մեկ անգամ քննարկել չհամաձայնեցված հոդվածները, միաժամանակ ներկայացնել աուդիտի որակի հսկողության և աուդիտորական կազմակերպությունների նկատմամբ վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու մեխանիզմները՝ դրանք հաջորդ նիստի ընթացքում քննարկելու նպատակով:

9. Գործուղվողը

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մեթոդաբանության և հաշվետվությունների մշտադիտարկման վարչության պետ Կարեն Ալավերդյան:

10. Ստորագրությունը, ամսաթիվը **20.09.2017թ.**